ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Արդյունաբերությունը որպես որակյալ աշխատուժի կիրառման ոլորտ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1983, 83 էջ։

Որակյալ կադրերի պատրաստման և նրանց օգտագործման արդյունավետության բարձրացման հարցը մեր տնտեսության ամենաարդիական ու հրատապ լուծում պահանջող կարևորագույն խնդիրներից է։ Հիշյալ պրոբլեմի լուծումը հատկապես կարևոր նշանակություն ունի ՀՍՍՀ արդյունաբերության համար, որտեղ ստեղծվում է հանրապետության ազգային եկամտի գերակշռող բաժինը, ուր դրաղված են հանրապետության որակյալ կադրերի զգալի մասը։ Այդ պրոբլեմի քննությանն է նվիրված գրախոսվող գիրքը։ Այն ընդգրկում է միմյանց հետ սերտորեն կապված տեսական ու գործնական հարցերի լայն շրջանակ, որոնք ամփոփվում են երեք գլուխներում. առաջին՝ արդյունաբերության աշխատողների պրոֆեսիոնալ-որակական կառուցվածքի փոփոխությունները գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում, երկրորդ՝ որակյալ կադրերի պատրաստումը և երրորդ՝ որակյալ կադրերի բաշխումն ու օգտագործումը։

Իր առջև դրված խնդիրը բացահայտելու նպատակով հեղինակն ուսումնասիրության առաջին գլխում հանգամանորեն քննարկում է արդյունաբերության մեջ բանվորների և միջին ու բարձր որակավորման մասնագետների պրոֆեսիոնալ-որակական կառուցվածքի փոփոխությունները գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում, բացահայտում այդ փոփոխությունների հիմնական ուղղությունները։ Նա ցույց է տալիս, որ հանրապետության արդյունաբերության ճյուղային կառուցվածքի, նրա տեխնիկական ու տեխնոլոգիական բազայի կատարելագործման և արտադրանքի անվանացանկի նորացմանը զուգընթաց գիտատեխնիկական առաջադիմության անմիջական ազդեցությամբ ընդլայնվում են արդյունաբերության ֆունկցիաների շրջանակները, որը համապատասխան տեղաշարժեր է առաջացնում աշխատուժի պրոֆեսիոնալ-որակական կառուցվածքում (էջ 11)։ Աշխատուժի պրոֆեսիոնալ կառուցվածքի վրա ազդող գործոնները հեղինակը պայմանականորեն բաժանում է երկու խմբի՝ հիմք ընդունելով նրանց ազդեցության բնույթը։ Առաջին խմբում ընդգրկվում են այն գործոնները, որոնք հանգեցնում են աշխատուժի պրոֆեսիոնալ-մասնագիտական ցանկի ընդլայնմանը (արդյունաբերության զարգացման տեմպերը, ճյուղային կառուցվածքի և արտադրանքի անվանացանկի փոփոխությունները), երկրորդում ընդգրկվում են սկզբունքային նոր պրոֆեսիաներ և մասնագիտություններ առաջացնող գործոնները։

Ա. Պետրոսյանի գրքում տնտեսագիտական գրականության մեջ եղած տեսակետների քննական վերլուծության բազայի վրա նորովի է բացահայտվում «պրոֆեսիա», «մասնագիտություն» հասկացությունների տնտեսագիտական բովանդակությունը։

Գրքի առավել ծավալուն բաժինը նվիրված է արդյունաբերության համար որակյալ բանվորական կադրերի, միջին և բարձր որակավորման մասնագետների պատրաստման հարցերի ուսումնասիրությանը։ Փաստական հարուստ նյութի վերլուծության հիման վրա բացահայտվում են արդյունաբերության համար որակյալ կադրերի պատրաստման առանձնահատկությունները, տրվում արդյունաբերության պահանջի և պատրաստվող կադրերի որակական և քանակական կառուցվածքի համապատասխանության հարցերի խորը ու հանգամանալից շարադրանքը։

Հեղինակը արտադրության մեջ բանվորական կադրերի պատրաստման եղանակի հիմնական թերությունն արդարացիորեն համարում է տեսական գիտելիքների ուսուցման ցածր մակարդակը, որն էապես արգելակում է բանվորների որակավորման հետագա բարձրացմանը։ Նշելով արտադրության մեջ բանվորական կադրերի պատրաստման եղանակի համեմատությամբ ՊՏՈՒ-ների (պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների) անվիճելի առավելությունները և միաժամանակ արձանագրելով պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության զարգացման փաստը, հեղինակը գտնում է, որ ներկայումս ՊՏՈՒ-ների ցանցը դեռևս չի բավարարում արդյունաբերության պահանջը որակյալ բանվորական կադրերով և՛ քանակական, և՛ որակական առումով (էջ 40), նա միաժամանակ բացահայտում է դրա պատճառները։ ՊՏՈՒ-ներում պատրաստված կադրերի որակական ոչ բարձր աստիճանը Ա. Պետրոսյանն իրավացիորեն կապում է նաև երիտասարդության պրոֆեսիոնալ

կողմնորոշման աշխատանքների անբավարար մակարդակի հետ։ Նրա հաշվարկներով այդ պատճառով միայն 1978 թ. արդյունաբերության համար կադրեր պատրաստող ՊՏՈՒ-ներից հեռացել են սովորողների 10%-ից ավելին։ Եվ դա այն դեպքում, մատնանշում է Ա. Պետրոսյանը, երբ ՊՏՈՒ-ներում սովորողները ստանում են կրթաթոշակ (30—37 ռ.), անվճար սնունդ, արտահագուստ, կարիքավորներին տրվում է նաև հանրակացարան, միաժամանակ նրանք արտադրական գործունեության համար լրացուցիչ վարձատրվում են, այլ ուսումնական հաստատություն դիմելու դեպքում օգտվում նախապատվության իրավունքից և այլն (էջ 44)։ Մեր կողմից ավելացնենք նաև երկու արտոնություն՝ քաղաքային բնակավայրում մշտական գրանցում և սովորելու տարիներին զինծառայության համար տարեհետում։ Մեր կարծիքով ՊՏՈՒ-ների սովորողներին տրվող հիշյալ արտոնությունները գերազանցապես վերածվում են հավաքագրվող կազմի պրոֆեսիոնալ կողմնորոշմանը հակազդող գործոնների և ՊՏՈՒ-ներ դիմողների մեծ մասը հիմնականում ձգտում է օգտվել այդ արտոնություններից և ոչ թե համապատասխան մասնագիտություն ստանալ։ Այդ են վկայում նաև հեղինակի ուսումնասիրության արդյունքները։ Այսպես, 1980 թ. արդյունաբերության համար կադրեր պատրաստող 10 ուսումնարանների շրջանավարտների 25%-ը կենտրոնացված բաշխման չի ենթարկվել (էջ 69), իսկ հաստատագրեր (վկայագրեր աշխատանքի տեղավորելու մասին) ներկայացրածների ավելի քան 30%-ը ընդունվել է աշխատանքի ոչ իր մասնագիտությամբ (էջ 45)։

Գրքում տրվում են նաև արդյունաբերության և նրա առանձին ճյուղերում միջին և բարձր որակավորման մասնագետների թվի միջև ստեղծված հարաբերակցության անհամապատասխանության պատճառները, կատարվում ընդհանրացումներ և նշվում հարցի կարգավորման ուղիները։

Արդյունաբերության համար որակյալ բանվորական կադրերի, ինչպես նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների պատրաստման, բաշխման և օգտագործման հարցի մանրակրկիտ քննարկումը հեղինակին հնարավորություն է տվել կատարելու մի շարք ուշագրավ առաջարկություններ։ Ա. Պետրոսյանի մենագրությունն աչքի է ընկնում, նաև հարցերի ընդգրկման մասշտաբայնությամբ, հարցադրումների խորությամբ և լուծումների ինքնատիպությամբ։ Այն կարող է օգտակար լինել ոչ միայն տնտեսագետների, այլև ընթերցող լայն շրջանների համար։

ԵՐՋԱՆԻԿ ՄԱԿԱՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու